

սակարդ հրէից գործերի մէջ, և հետեւի Յովհաննու քա-
րոզած պատուէրներին, և ապաշխարութեան արժանի
պատուը ցոյց տայ. որպէս զի Տիրոջ փառքն և նորա փրկու-
թիւնն հասած ժամանակն պատրաստ ժողովուրդ լինի,
նորա ձրի շնորհքներն ընդունելով՝ իմաստուն կուսանացնման
լի իւղով վառեալ լապտերներով ընդառաջէ անմահ Փե-
սային, որ է օրհնեալ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյն յա-
ւիտեանս. ամէն:

Անանիա Եղիսեպոս



Դարձեալ Զուարթնոց Եկեղեցի *

Մեզ մնում է մասնանիշ անել Յուսիկ սրբազանի յօ-
դուածի մէջ նկատած մի քանի սխալների և թիւրիմացու-
թիւնների վերայ:— Հակառակ Հ. Ալիշանի՝ նա կարծում է,
որ Տիրորի եկեղեցին պէտք է շինուած լինի ոչ Յովհան Ման-
գալունու, այլ Յովհան Բաղարանցի (Աւանեցի) հակաթոռ-
կաթուղիկոսի օրով. բայց բերած փաստերը տարօրինակ են:
Եկեղեցու արձանագրութեան մէջ «Ներսէհ» անուն չկայ.
իսկ Յունաց կայսեր դէմ ապստամբած Սարգիս Վահեւունի
սեպուհը՝ յոյն Հերակլ և հայ Համագասպ Մամիկոնեան զօ-
րավարներից ձերբակալուելով ու մահուան պատիժ կրելով,
սուրբ չէր դառնայ և ժամանակակից, Յունաց իշխանութեան
ներքոյ գտնուող, կաթուղիկոսի հետ մի եկեղեցւոյ արձանա-
գրութեան մէջ իբրեւ սուրբ յիշուի՝ այն պատճառով միայն,
որ իբրեւ ծեր մարդ երիտասարդ ազգականի՝ մահը չի կամե-
ցել տեսնել և խնդրել է առաջ իրեն գլխատել: Եթէ «և
սրբոյ Սարգսի» ուղիղ ընթերցուած է, ապա անշուշտ յայտ-
նի ս. Սարգսի մասին է խօսքը, որի անունն և նուիրած է
եկեղեցին և որի բարեխօսութեան գիմում է կառուցանողը:
Ուրիշ «անձնուէր» Սարգիսներ ինչ գործ ունէին այսակող:

* Շար. տես. «Արարատ», Յունուար էջ 38:

«Մանանն» ևս «Մամակ» դարձնելու հիմք չկայ, հենց այն պարզ պատճառաւ, որ Մամիկոնեանները սպարապետ էին, և զոնէ մենք չենք յիշում մի Մամիկոնեան, որ հաղարապետ եղած լինի: Նոյն պատճառով անաեղի է նաև Հ. Ալիշանի ենթադրութիւնը, թէ «Մանան հաղարապետ» Մեծն Վահան Մամիկոնեան մարզպանը կարող էր լինել: Աւելի յարմար էր գուցէ «Մանանը» նոյնացնել Ամատունեաց տէր Մանգենի հետ, որ յիշուում է Բաբգէն կաթողիկոսի թղթի մէջ, հայ նախարարների շարքում: * բայց արձանագրութեան խօսքերը (որ դժբաղդարար ճշտութեամբ ընդօրինակուած չեն երևում) այնպէս են շարայարուում, որ աւելի ուղիղ պէտք է լինի հաղարապետ բառն այստեղ ընդհանուր մտքով հասկանալ իբրև «վերահացու» կառավարիչ», և Մանան տնուամբ յիշուած համարել ոչ թէ Հայոց հաղարապետին, այլ եկեղեցւոյ շինութեան հետ մօտիկ առընչութիւն ունեցող մի անձի: Դիտաւոր գործիչին՝ եկեղեցին կառուցանող Սահակ Կամսարական իշխանին դալով, Մանգակունու ժամանակակից է այն «Սահակ Կամսարական երանելոյ Արշաւրայ որդին»**, որին Վահան Մամիկոնեան ուրիշների հետ պատգամաւոր է ուղարկում Նիխորի մօտ և որ անշուշտ Արշաւրի միւս աւելի յայտնի որդիներից՝ Ներսէսից և Հրահատից, ոչ թէ երէցն է, ինչպէս կարծում է Հ. Ալիշան, այլ կրտսերը՝ Բաբգէն կաթողիկոսի օրով, ինչպէս երևում է սորա յիշեալ թղթից, նոցա իշխանութիւնը ժառանգած և «Արշարունեաց տէր» դարձած: Միայն Արշարունեաց եպիսկոպոսի անունը տարբեր է Բաբգէնի թղթի (Թաթուլ) և արձանագրութեան (Յովհաննէս) մէջ. բայց Յովհան Մանգակունու կաթողիկոսութեան և Բաբգէնի թղթի գրութեան ժամանակամիջոցում կարող էր ի հարկէ մի եպիսկոպոսը փոխանանաւ և միւսը յաջորդած լինել: Քանի որ մեզ ծանօթ անուններն և պարագաներն ըստ ամենայնի յարմար են դալիս Յովհան Մանգակունու ժամանակին, և Տիկորի եկեղեցին՝ իւր պատկառելի

* Գիրք Թղթոց. Թեֆլիս, 1901. էջ. 42.

** Ղազար Փարպեցի, պատմութիւն. Վենետիկ, էջ 495.

հնութեամբ և ինքնուրոյն ճարտարապետութեամբ,* Ե. դարի վերջերում կառուցուած համարելու ոչ մի արդելք չկայ՝ անաղի կլինէր առանց փաստի նոր ենթադրութիւններ անելու ապա թէ ոչ՝ ինչո՞ւ չհամարել Հայոց օրինաւոր կաթուղիկոս Յովհաննէս Գաբրէլեցու (†513), այլ հակաթոռ Յովհան Աւանեցու օրով կառուցած, որին զփուար թէ իբրեւ կաթուղիկոս իսկ ընդունէին՝ իրենց մայրենի եկեղեցուն, որչափ զխաւեր, միշտ հաւատարիմ եղած Կամսարական իշխանները:

Տիկորի եկեղեցուց յետոյ հնութեամբ երկրորդը համարում է Սրբազանը Գաւիթ Սահառունու կառուցած Մրենի եկեղեցին՝ փոխանակ ժամանակակից պատմութեան, Հ. Ալիշանին հետեւելով և շինութեան թուականը 613—4 (կամ ըստ Սամուէլ Անեցու 615) ղենելով: Սակայն Գաւիթ Սահառունին կիւրապարտաւ կարգուեցաւ ըստ Սերէոսի** և այլոց եզր կաթուղիկոսի օրով, Վարադաիրոց Ասպետի աքսոր ղնալուց յետոյ՝ իսկ Վարադաիրոց Հայաստան մարդպան եկաւ 629 թ. ին, և նոյն տարին կաթուղիկոս ընտրուեցաւ Քրիստափոր, որ երկու տարի իշխանութիւն վարեց և երրորդին զրկուեցաւ ամբողջ.*** ուրեմն եզր յաջորդեց նորան 632 թ. ին: Այնուհետեւ աղի ունեցաւ Հայոց եկեղեցական միութիւնը Յունաց հետ, Վարադաիրոցի փախուստը, Մովսէս Գնունու սպանութիւնը, որ նոր հոնդէս եկաւ Գաւիթ Սահառունին և իշխեց երեք տարի: Քէպէտ ուրիշ հանգամանքներէց երեւում է, որ եզր աւելի վաղ պէտք է կաթուղիկոս եղած լինի, և վերը յիշուած բոլոր դէպքերը զփուար է Սերէոսի ներկայացրած կարճ ժամանակամիջոցի մէջ ամփոփել, բայց յամենայն դէպս Սահառունին չի կորուց 630 թ. ից առաջ իշխանութիւն ստացած լինել. — և ոչ 636-637 թ. ից յետոյ,

* Աւելորդ է ասել, որ 641 թ. ին առաջին անգամ իբրեւ կողոպտիչ Հայաստանում ոտ դնող Սրաբները ոչ Յովհան Բագարանցու ժամանակ (616) և ոչ իսկ Ե. դարու վերջին կառուցուած եկեղեցիների ճարտարապետութեան վերայ ամենափոքր ազդեցութիւն ունենալ կարող էին:

** Կ. Պոլսի տպ. 1861. էջ 152.

*** Նոյն էջ 154.

որովհետեւ Սերէոս, նորա իշխանութիւնից հալածուելը յիշելով՝ անմիջապէս կցում է այն խառնակ զրութեան ներկարագիրը, որ յառաջ եկաւ Արարացւոց առաջին արշաւանքների ժամանակ, և ի միջի այլոց Քաղխիջայի (ըստ Սերէոսի Հերթիճանի) նշանաւոր ձակատամարտը, որ տեղի ունեցաւ 636 կամ 637 թ. ին։ Այսպէս ուրեմն Մրենի եկեղեցին, եթէ ստուգիւ այս Գաւթ Սահառունու հիմնարկութիւնն է՝ աւելի ուշ է կառուցուել, քան ս. Հովհաննէս տաճարը, և ժամանակակից է ս. Գայանէի և Իւչքի-յիսէի ս. Յովհաննու տաճարներին։ Վերջինս մոռացել է Սրբազանը յիշել սոյն դարու շինուածքների շարքում։*

Սրբազանը սխալուում է նաեւ ենթադրելով, որ այդ դարու շինուածների մէջ միակ քանդակազարդը իրրեւ բացառութիւնս Զուարթնոց եկեղեցին էր։ Թող Մրենի եկեղեցու քանդակները, որ յետոյ փորած համարելու ոչ մի հիմք չկայ, մի քանի ըսյլ մեզնից հետո և շարունակ մեր աչքի առաջ եղող ս. Հովհաննէի տաճարն ևս խիստ գեղեցիկ ու նուրբ քանդակներ ունի, յար և նման Զուարթնոց եկեղեցու աւերակների մէջ զանուածների, — որոնք մի փառաւոր կամար են կազմում զրան վերեւ և զարդարում զրան գլխի լուսամուտը։ Արդարեւ այդ կամարն ու լուսամուտը ցածում նայողի աչքից ծածկում է այժմեան անշնորհք զանգակատունը, որ և պատճառ է եղել թիւրիմացութեան, բայց միւս լուսամուտների վերայ ևս կան քանդակների հեղքեր, և Զուարթնոց եկեղեցու աւերակները ապացուցանում են քնդհակառակն, որ մեր հին տաճարներն ոչլ տեսք են ունեցել, քան այժմ կրկում են։ Բացի քանդակներ ունենալուց նորա ներսից ծեփուած էին և գեղեցիկ նկարներով զարդարած, որ թափել ոչնչացրել են ժամանակի աւեր-

* Տես. Այրարատ, էջ 529. Ի գէպ, նորա աչքից փախել է նաեւ Վաղարշապատի կաթուղիէէ մի կարևոր նորոգութիւնը Սահակ Պարթևի ձեռքով, որի մասին յիշում է Զ. դարու մի շատ արժանահաւատ յիշատակարան՝ Վնշանագիր կարգաց բանից եղնկանն երկցու. տես Սամուէլ Անեցի, էջ 266:

մունքներն ու նորանոր նորոգութիւնները: Զարմանալին այն է, որ է. դարու «քանդակները բաւական նորութիւն ունին», այլ շատ դարմանալի կլինէր, եթէ հետագայ դարերինը իրօք աւելի նուրբ լինէին: Մեր հայերն իրենք չեն հարել այդ քանդակները, այլ փոխ են աւել Ռիզանդիոնից, որ անմիջական ժառանգն էր գեղարուեստների աշխարհին Յունաստանի և մի դար առաջ, Մեծն Յուստինիանոսի օրով, քրիստոնէական ճարտարապետութիւնը իւր կատարելագոյն ծաղկմանն էր հասցրել՝ ս. Սովիայի հրաշակերտը ստեղծել: Այնուհետեւ, քանի առաջ գնանք՝ նորոճաշակ դասական ժամանակներից դէպի կոպիտ միջնադարն ենք դիմում. և թէպէտ Բագրատունեաց ժամանակ եկեղեցական ճարտարապետութիւնը Հայաստանում մի ինքնատիպ և խիստ աչքի ընկնող ծաղկման շրջան է ունեցել, բայց ինչ քանդակներին է վերաբերում՝ նաև այդ ժամանակի գործերը շատ հեռու են Զուարթնոց եկեղեցու աւերակների մէջ գտնուածների նորութիւնն ունենալուց, որոնցից իւրաքանչիւրը զեռ դասական ժամանակի դրոշմն է կրում և որոնց օրինակ չորս գեղաքանդակ արժիւնների—նման հրաշալի արուեստի գործեր դժուար թէ գտնուին Հիւսիսի Արծուի հովանաւորութեան ներքոյ գտնուող բոլոր ընդարձակ երկիրներին մէջ:

Իբրև մի կողմնակի խնդիր կ'իշխէ Յուսից սրբազանի այն թիւրիմացութիւնը, որով նոյնացնում է Նրազմիյն տեղը՝ Անահտական քաղններին հետ: Ազաթանգեղոսի մէջ կարդում ենք. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր ամենայն զօրօքն հանդերձ ի վաղարշապատ քաղաքէ՝ երթեալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբաղինան անահտական դիցն, և որ յՆրազմիյն տեղին անուանեալ կարդայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազընդհան պաշտաման Տիւր դից դպրի գիտութեան քրմացն՝ անուանեալ դիւան գրչի Արըմզդի ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա արկեալ ձեռն՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին»:—Պարզ է որ կէտադրութիւնը սխալ է այստեղ. «անահտական դիցն» բառերից յետոյ վերջակէտ պէտք է դնել

և կարդալ. «Եւ որ յերազմոյն տեղին անուանեալ կարդայր նախ գիտեալ ի ճանապարհի՝ երազացոյց և ըն։ Անահատական բաղինները զանուում էին Արտաշատում, իսկ «Երազմոյն տեղին» Վարդաշատոյց Արտաշատ ասնող ճանապարհի վերայ (հարկաւ ոչ Զուարթնոց եկեղեցու անդում, ինչպէս ուզիդ բացատրում է Սրբազանը)։ Տրդատ և Լուսաւորիչ նախ այգակդ են գալիս, երազացոյց երազընդհան Տիւր Աստուծոյ մեհանը կործանում, ապա թէ Արտաշատ գնում։

Աւելի ուշադրութեան արժանի է այն թիւրիմացութիւնը, որով Սրբազանը Ներսէս Շինողին յունամոլ ու իւր ժողովրդեան առեւելի է ներկայացնում, և զորանից նորա շինութեան վերաբերմամբ հեռուութիւններ հանում։ «Յունաց Կոստանդին կայսրին հաճոյանալու համար» չէր անշուշտ որ Ներսէս հաղորդուեցաւ յունածէս պատարագին, այլ ընկճուելով կայսեր բռնն զարութիւնից։ Կոստանդ կայսրն այնպիսի մարդ չէր, որ Հայոց կաթողիկոսից շատ աւելի զօրեղներն իսկ կարողանային գիմադրել նորա կամքին. դեռ մի քանի ամիս առաջ նա կապանօք Կ. Պոլիս էր բերել տուել Հռոմի Մարտին պապին և ծանր խոշտանգանքի ենթարկելուց յետոյ արքայն ուղարկել։ Երբ նա հեռու էր և պակաս փառնգաւոր, Բրիստոսասէր Ներսէս կաթողիկոսը ժողով գումարեց և նորա առաջարկները չընդունելով, ու յանձն չառնելով «փոխել զճշմարիտ վարդապետութիւնն սրբոյն Գրիգորի ըստ տումարին Լեոնի»՝ շատ համարձակ պատասխան գրեց նորան. և մենք առանձին պատճառ չունինք նորա ուղղամտութեան վերայ կասկածելու և հաւատալու Սերէոսին, թէ նա արդէն այդ ժամանակ «ծածկեալ ունէր զթիւնս դաւնութեան, և խորհէր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն, բայց ի վեր հանել զբանն ոչ համարձակէր»։ Արդեօք ինքը Սերէոս կաթողիկոսին շրջապատող այն եպիսկոպոսների թուում չէր, որոնք նորա հետ մեկտեղ հաղորդուեցան յունածէս պատարագին, և այժմ յարմար առիթ է գտնում բոլոր մեղքը մեծի վերայ ձգելու։ Մենք չգիտենք, թէ ինչ պատճառներից զրդուած նա այսպէս է խօսում իւր կաթողիկոսի մասին, բայց կարող ենք հաստատ

ասել, որ բոլորովին անհիմն է այդ առարկութիւնը, թէ Ներսէս սղկրից և եթ չհաամուտ է եղել իւր ժողովրդին քաղկեդոնական դարձնելու ու միայն յարմար ժամանակի է սպասել: Անշուշտ, եթէ կայսրն անձամբ չգար Հայաստան և նորան չստիպէր, նա երբէք մտքովն իսկ չէր անցնի Քաղկեդոնի ժողովը քարոզելու ս. Գրիգորի եկեղեցում և հաստատ կմնար այն դաւանութեան, որ յառաջ էր բերել կայսեր ուղղած ժողովական թղթի մէջ:— Իսկապէս նա կայսեր չհնազանդելու օրինական պատճառ էլ չունէր: Մի քանի անգամ առիթ ենք ունեցել պարզելու, այժմ ստիպուած նորից պէտք է կրկնենք, որ կայսեր առաջարկածը ո՛չ թէ բուն զուտ քաղկեդոնականութիւնն էր՝ այնպէս, ինչպէս ընդունուած և հաստատուած է յոյն և կաթոլիկ եկեղեցիներին կողմից, այլ մի միջին ճանապարհ մի բնութեան և երկու բնութեան ուսմունքների մէջ—մի կամքի վարդապետութիւն, որ ձևակերպուել էր Հերակլ կայսեր օրով և նորա հիման վերայ միութիւն հաստատուել արեւելեան եկեղեցիներին ի թիւս այլոց Հայերի հետ: Այժմ Հերակլի թու Կոստանդ պահանջում էր, որ նոյն դրութիւնը պահուի. Մարտին պտպը, հակառակ իւր նախորդ Անորիոսի, որ այդ դրութիւնն ընդունել էր՝ երկու բնութեան հետ նաև երկու ներգործութիւն, երկու կամք էր քարոզում, ու աթոռից ձգուեցաւ. եթէ Ներսէս Գ. ևս չվերահաստատէր այն, ինչ որ իւր նախորդն ընդունել էր, այլ երկու բնութեան ուսումը հերքելով՝ մի կամքի հետ նաև մի բնութիւն պաշտպանէր, քաջութիւն արած կլինէր և լաւ անուն թողած, բայց անկասկած մեծ ազէաներ կրեբէր իւր ժողովրդի գլխին: Սերէոս ինքն է սրտամում, թէ ինչպիսի ծանր ցասմամբ էր գալիս Կոստանդ Հայաստան՝ սրտովնու համար հայերին, որ Աբաբների հետ դաշն էին կապել և նոյա ձեռքը տուել իրենց երկիրը: Կաթոլիկոսը շտապեց հայ իշխանների հետ նորա զիմացն ելնել Կարինում և սիրան առնել, և եթէ նորա վերադարձին ինքն էլ հետը Յունաց կողմերը դնաց՝ ելկիւղ կրելով Թէոդորոս Ռշտունի իշխանից, բուն պատճառն անշուշտ այն չէր, որ քաղկեդոնականութիւն էր ըն-

դռնել, այլ որ Ռշտունի զօրավարին էր ներկայացրել կայսեր առաջ իրրե բոլոր չարեաց պատճառ և Արաբների միակ դաշնակից, ապա թէ ոչ, նոյն Ռշտունու ներկայութեամբ Եղբ կաթուղիկոսը միութիւն էր հաստատել Յունաց հետ և անպատիժ մնացել, ինչո՞ւ պէտք է նորա յաջորդը այդ միութիւնը վերանորոգած լինելուն համար վախենար: Յամենայն դէպս Ներսէս Գ-ի յունամիտ և քաղկեդոնական լինելու միակ փաստը կայսեր հետ մի պատարագի հաղորդուելն է, և այդ փաստը կորցնում է իւր զօրութիւնը, եթէ բոլոր հանգամանքները կշռենք: Նա կարող էր յունական կրթութիւն ստացած լինել, սիրել յունական պաշտամունքի և արուեստի փարթամութիւնը և, իրրե մօտ ծանօթ Յունաց եկեղեցւոյ դաւանութեանն ու կորգերին՝ աւելի լայն հայեացքով նայել նաեւ իւր ժամանակում արծարծուած դաւանական խնդիրների վերայ, բայց հաւատարիմ մնալ իւր եկեղեցուն և նոյն իսկ իւր նախորդի արած զիջումները չկրկնել, եթէ հարկը չստիպէր: Եւ այս վերջին կէտը չի նկատուել իրրե մի առանձին սև բիծ նորա կեանքի վերայ՝ ո՞չ ժամանակակիցների և ո՞չ մանաւանդ յետագայ պատմիչների կողմից: Աւերէոս ինքը սովորաբար մեծ յարգանքով և գովասանքով է խօսում նորա մասին, և նորա ժամանակի ամբողջ պատմութիւնը վկայում է, որ իւր հօտի համար անձնադիր հովիւ է եղել նա՝ նեղութեան և աւերածութեան ամենադառն օրերում: Ուստի նորա ատելի դառնալու մասին խօսք լինել չի կարող. ո՞ւր մնաց թէ այդ ատելութիւնը որդւոց որդի աւանդուէր և զրգուէր հայ ժողովրդին անառբերութեամբ վերաբերուելու դէպի նորա կառուցած եկեղեցին՝ նպաստէր վերջինիս աւերուելուն և աւերակ մնալուն:

Ինչպէս տեսանք, Արաղանի ենթադրութիւնը, թէ նա մի դար միայն կանդուն է եղել՝ ո՞չ մի հիմք չունի. իսկ թէ, Ժ. դարում կործանուելով, նա աւերակ է դարձել ու չի վերաշինուել—ինչ զարմանք. մեր ո՞ր աւերակներն են վերաշինուում և Զուարթնոց եկեղեցուն ժամանակակից քանի՞ շէնք է կանգուն մնացել: Ո՞ւր է նորա օրինակով շինած Անւոյ ս. Գրիգորը, ո՞ւր է քստ աւանդութեան Վարդան Մամիկոնեանի

կառուցած և ուրիշ, հայ ժողովրդեան սիրելի, անձանց ձեռքով վերանորոգած Դուինի ս. Գրիգորը. որ աւանդապահ հայը կարող է նոցա տեղն անգամ ցոյց տալ: Արդեօք Վաղարշապատի և շրջակայքի այն ժողովուրդը, որ «անտարբեր է եղել միշտ դէպի խանգարած և կեղեցին և ոչ մի բարեպաշտական ձգտումն չէ տածել դէպի այն» — ինչքան ժամանակից ի վեր հաստատուած է իւր բնակավայրում և քանի սերունդների աւանդութիւն է պահում իւր մէջ. մինչև վերջին տասնեակ տարիները քանի մարդ էր ուխտ դնում ս. Մեսրոպի շիրմին և նորա կանգուն տաճարի մէջ աղօթում: Միթէ ուրիշ ամէն տեղ էլ հայ ժողովուրդը Վարդանների և Վահանների, Գրիգորների և Ներսէսների զերեզմանների վերայ նստած՝ դէպի հասարակ խաչքարերն ու հրաշագործ աւետարանները չէ «բարեպաշտական ձգտումն տածում»: Արեան ծով Արարատեան դաշար ինչ յիշատակների, ինչ աւանդութիւններ չէ կլանել, որ Զուարթնոց եկեղեցու յիշատակը պահած և ներկայ սերունդին աւանդած լինէր: Զուարթնոց եկեղեցու խանգարուելու պատճառը ոչ հայ ժողովրդի անտարբերութիւնը կարող է համարուել, ոչ անհամակրանքը դէպի նորա շինութեան հանգամանքները, և ոչ նորա անմարդաբնակ ու հայրապետների բնակութեան անյարմար լինելը. նա երկար ժամանակ, ինչպէս երեւում է, բնակարաններով և ծառաստաններով շրջապատուած է եղել, և անբնակ է դարձել այն ժամանակ, երբ մարդու գլուխն այս դաշտում սոխի գլխից աւելի չարժէր: Եթէ նորա փառահեղ բեկորները գարերի բռնութեանը յաղթելուց յետոյ այժմ կրկին գետնի տակից գլուխ են բարձրացնում և հիացմունք ազդում նայողին՝ նորա հոյակապ շինուածքի դիմացիւնութեան, և ոչ թէ խախուտ լինելու ապացոյցն է այդ:

Մենք յոյս ունինք, որ անշահ զրոյցները կանցնին և այս աւերակներն իրենց արժանի յարգը կդանեն թէ՛ դիտութեան և թէ՛ հայ ժողովրդի բարեպաշտական զգացմանց համար: Երկու բան միմեանց հետ չպէտք է շփոթել: Յուսիկ Սրբազան իրաւամբ արժանի յարգը տալիս է շ. Խաչիկի

կատարած աշխատութեանց.* եթէ նա կամայ ակամայ, ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստել է զրոյցների յառաջ գալուն և տարածուելուն՝ թող դորա համար միայն դատապարտուի, և ոչ թէ նորա գործի բուն արժէքս ևս ուրացուի: Լրագրական իրենց ազխտութիւնը մասնող թղթակիցների յարձակումները նորա ազխտութեան դէմ բոլորովին անտեղի են: Բաւական է յիշել միայն Ֆրանսիացի հռչակաւոր հնագէտ Դը-Մորգանի վկայութիւնը, որ Զուարթնոց եկեղեցու այցելուաց տեսրակի մէջ արձանադրել է, մեր առաջ ևս բերանացի հաստատուց, թէ ոչ մի գիտնական հընախօս չէր կարողանայ աւելի բարեխղճութեամբ և հմտութեամբ կատարել այդ պեղումները:

Հարկաւ եկեղեցին նոյնութեամբ վերականգնելու մասին ներկայ պայմաններում խօսք լինել չի կարող. եկեղեցի շինող լինէինք ամէնից առաջ Մայր Տաճարը իւր ներկայ, ամէն հայ մարդու ամօթ բերող՝ դրութիւնից կհանէինք: Սակայն ոչինչ չի արգելում մի փոքրիկ մատուռ կառուցանելու այդ աւերակների տեղում և Մ. Ամոռը շրջապատող սրբավայրերի ու պատկառելի հնութիւնների շարքում դնելու նրանց՝ ապահով և բարեխնամ վիճակի մէջ: Հայ ժողովրդի համար նուիրական սրբութիւն են նոքայ թէկուզ այն գեղեցիկ աւանդութեան հիման վերայ, որ այդ տեղում խոր վիրապից ելած Մեծ Լուսաւորիչը իւր առաջին օրհնութիւնն է տուել

* Ի դէպ, հասկանալի չէ նորա ենթադրութիւնը, թէ ձեւմարանի բաղում եղած խոյակները գտնելու համար պէտք է պեղումն եղած լինի Զուարթնոց եկեղեցում ժԹ. դարի սկզբին: Պեղման ինչ հարկ կար, քանի որ Շահխաթունեան վկայում է, թէ դեռ նորա ժամանակ երևում էին եկեղեցու, պարսպի, բուրգերի հիմունքները, նոյն իսկ սենեակներ: Այդ քարերն անշուշտ ընկած են եղել դուռը, կամ կիսով չափ միայն ծածկուած հողի մէջ. ուրիշ աւելի մանր քարեր, որչափ կարողացել են տանել՝ տարել, շինութեանց և այլ նպատակների համար դործ են դրել: Վաղարշապատի գերեզմանատանը կայ մինչև այժմ սեան մի խոշոր խոյակ. մի աւելի փոքր քանդակեալ բեկոր ևս վանքի բաղում, դեղատան մօտ: Իսկ այն մեծ մեծ ժայռերը ո՞վ պէտք է տեղից շարժէր, եթէ առանձին հետաքրքրութիւն չունենար:

առաջին քրիստոնեայ թագաւորին. մանաւանդ թէ այն պատճառով, որ մի քանի դար շարունակ մեր նախնիք աղօթել են այս տաճարի յարկի տակ, մեր հայրապետները նորա բեմից քարոզել, մխիթարել, ս. Հոգւոյ շնորհներն են բաշխել իրենց հօտին: Իսկ նոցա իւրաքանչիւր բեկոր անկողոպտելի սեփականութիւնն է Մ. Աթոռի, որովհետեւ նորա հայրապետներն են այդ բոլոր շինուածքը կառուցել և սուրբ միւռնո՞վ նորա քարերն օծել, որովհետեւ նորա մի միաբանն է՝ նորա և հայ ժողովուրդի նպաստներով, աւերակներն ի յայտ ածել, — լինելով միանգամայն խիստ գնահատելի գիւտ և ընդարձակ հետազոտութիւնների նիւթ հնախօսական գիտութեան համար:

Կ. Վ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԸՅ ԵԿԵՂԵՑԻ

Ս. Սինոդի Օրենք-պրոկուրորի ամենահպատակօրէն ներկայացրած հաշիւը, ի միջի այլոց, խիստ հետաքրքրական տեղեկութիւններ է պարունակում Ռուսաստանի աղանդների մասին:

Նա ասում է. Սրբազան առաջնորդները ամէն տարուայ հաշիւներէց և աղանդաւորների հետ ունեցած խօսակցութիւններից այն եզրակացութեան են եկել, որ նոցա մեծամասնութիւնը եկեղեցւոյ ամենահասարակ ճշմարտութիւնները չգիտէ, և այդ տգիտութեան մէջ մնում են բացառապէս իրենց դեկավարների պատճառով, որոնք ոչ միայն հաւատոյ նկատմամբ վէճի բռնուել ուղղափառ հոգեւորականութեան հետ թոյլ չեն տալիս, այլ և աշխատում են տեսակցութիւնն անգամ արգելել: Այն ինչ նկատելի է, որ աղանդաւորները հետաքրքրութեամբ են նայում հոգեւորականութեան վերայ. ոմանք հեռուից